

ինչպիսիք: Բայց տարիներ ընթացելով, անցաւ մոռացիցաւ և գրադարան բանալու ինչպիսիք, որպէս չհրաժարան: Մինչև այսօր էլ Ներսիսի գործը գտնուած համարվող երկրորդականութիւնը, առանց կարմրելու կարող է պարծենալ, որ Ներսիսի նշանակալից հայաշատ քաղաքը դուրի է գրադարան-ընթերցարան ունենալու, որ Ներսիսի եղած ընթերցասէր հասարակութիւնը իր մտաւոր պահանջին փոխանակ գրադարանում բաւականութիւն տալու, վերջինի բացակայութեան պատճառով, ստիպւած է ուրիշ գրադարաններ և անբարոյական տեղեր յաճախել, որպէս զի իր պարտականութիւնը ազատ ժամանակը մի կերպով վատնէ: Կրկնում ենք, որ այդ բոլորը Ներսիսի ինտելիգենցիան կարող է պարծանքով յիշել, որովհետև գուցէ միակ բացառութիւնն է Կովկասի նահանգական քաղաքների մէջ, որտեղ գրադարանի հետ բացակայ են նաև որ և է հասարակական կրթիչ հիմնարկութիւնները:

Մինչևեւ գաւառական փոքրիկ քաղաքները ձգտում են բացի գրադարանից ունենալ նաև ուրիշ հասարակական ժողովատեղիներ, որտեղ ժողովրդի ցածր դասակարգը յաճախ է իր անգործ ժամանակը և մի կերպով օգտւած լինի, Ներսիսի գրադարանը դարձ աւելորդ է համարում այդօրինակ հիմնարկութիւնների մասին մտածելն անգամ, թէ և ըստ երևոյթի կարող է պարծենալ, որ ունի գրադարան երկրորդականութիւն, ունի թիմական դպրանոց իր համալսարանական ուսուցիչներով...

Մենք նորից պնդում ենք տարիներ առաջ մեր արտայայտած մտքի վրա, թէ հասարակական կրթութեան և առաջադիմութեան համար մտածողները, նրա առաջնակարգ, դարգացած դասակարգը պէտք է լինի, հետևապէս գրադարանը դասի վրա բարոյական պարտականութիւն է ընկնում ազէտ դասին իր տգիտութիւնից հանել, որի մէջ անգիտակցաբար խորխորում է և ցոյց տալ ուղիղ ճանապարհ առաջ ընթանալու... գրադարանը և առհասարակ ընթերցանութիւնը մի մեծ դպրոց է հասարակութեան առաջադիմութեան նպատաման գործին. այդ փաստ է, որ մեկնութեան չէ կարոտ:

Մենք նորից դիմում ենք Ներսիսի լաւագոյն երկրորդականութեան, սպասելով որ վերջինը վերջնապէս կիրառործէ գրադարան հիմնելու գեղեցիկ միտքը: Դրանով երկրորդականութիւնը թէ կատարած կը լինի իր բարոյական պարտականութիւնը, կրթելով մի հասարակութեան մեծամասնութիւն և թէ բարձրացած կը լինի իրան վարելը, կանգնելով երկրորդական իսկական կոչման աստիճանի վրա:

Մենք մեր կողմից կառավարիկներ այն երկրորդականութիւնը, դարձեալ բանալու համար դիմել կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան Ներսիսեան ձեռնարկ, խնդրելով վերջինից նպաստ մենք հաւատացած ենք, որ իր կողմից Բարեգործական ընկերութիւնը չի զլանայ նպատակներ գրադարանի բացման, մանաւանդ որ ինքն ընկե-

րութիւնը մտադրութիւն ունի գրադարան բանալու երևանում...

Ս. Օ.

ՆԱՄԱԿ ԶԱՆԳԵՂՈՒԹՅՈՒՆ

Գեղեցիկների 15-ին

Ձանդեղուրի գաւառական անցեալ նոյնիքներին հրամայել է գաւառի բոլոր տաճարներին, որ նրանք իրանց հասարակութիւնների իւրաքանչիւր տանը մի պուգ մորեխի ձու հաւաքել տան:

Մինչև օրս թափօրի և մատաղի միջոցով աստուածային ցատու-պատահանից օգնութիւն սպասող ժողովուրդը, այսօր տեսնում է մի հրաման, որից երևում է, որ թափօրն ու մատաղ մորեխ չեն կոտորի, այլ պէտք է յուսալ ինքնօգնութեան վրա:

Գաւառում Մեղրի գիւղն առաջինն եղաւ, որ դիմադրելով ցրտադին օրերին, շարունակ երկու շաբաթ հաւաքեց մորեխի ձուանքը: Մեղրից էլ օրինակ առան շրջանակները և մասամբ կատարեցին իրանց պարտականութիւնը:

Ձուանքի հաւաքող խմբակները յարգանքով էին վերաբերվում դէպի գաւառական տեղի այդ կարգադրութիւնը: Նրանք հաւատում էին, որ փչացնելով մորեխի ձուանքը թու՛նք ազատել են մի քանի պուգ ցորեն:

Գիւղացիների մորեխի ձուեր հաւաքելը մեծ քայլ է, գոյութեան արժանի և նպատակայարմար: Մի մասն այժմ հաւաքելով, իսկ մնացած մասն էլ ձուերից դուրս եկած ժամանակ կոտորելով, լիադայ ենք որ մորեխը կոչնչանայ: Շատ լաւ կը լինի, եթէ այդ մի և նոյն անձ հարկան Պարսկաստանի Արարկասական նահանգի արաքսալիսայ ժողովուրդը, ուր ներկայ թէի հռնձը մորեխը փչացնելով ձու է դրել և վտանգ է սպառնում Արաքսի աջ և ձախ ափերի ցանդերին: Բայց ինչպէս երևում է, ասորպատականցիներ միամիտ է, որ մատուցած զոհերի, թափօրով դուրս բերված սրբոց մատուցների բարեխոսութեան չնորսով, մորեխի ձուերը լուծվելու են հողի հետ և ոչնչանալու:

Այդ հայեացքը, մայրական կաթի հետ մանկով բուռն է դրել ոչ միայն մի քանի ասորպատականցիների, այլ և ամբողջ հարկան Արարկասական և սակաւ բացառութեամբ Ձանդեղուրի գաւառի բնակիչները գլխնեւում:

Ապագայի դուռ լինելով ժողովրդին այդ դուռից հանելը, ներկայումս ցանկալի է, որ մեղրից մի քանի վերստով հեռու հարկան Պարսկաստանում էլ կարգադրութիւն լինէ՛ր որպէս մորեխի ձուեր հաւաքելու, նմանապէս և գարնանը մորեխի կոտորելու համար:

Հաստատ աղբիւրներից լսում ենք, որ այժմ Արարկասականում ցորենի թանգութիւն է և մի քանի քնտանիք էլ չուղ ևն թափելով մի կտոր հացի համար: Բայց եթէ մորեխի ձուեր հաւաքելը մնայ նրանց կողմից առանց ուշադրութեան, այն ժամանակ ոչ միայն մի քանի ընտա-

նիք կը չուեն թափելով, այլ Ձանդեղուրի հարկան Պարսկաստանի սահմանադրի ժողովրդի մի ստուար մասը, անկարող լինելով դիմադրել սովին, կը գաղթէ Աստուած գիտէ թէ դէպի ուր: ***

ՆԵՐՏԻՍ ԼՈՒՐԵՐ

Այսօր հրատարակում ենք «Մշակի» ներկայ 1890 թ.ի վերջին, 149-որդ համարը: Առաջիկայ 1891 թ.ի «Մշակի» առաջին համարը լոյս կը տեսնի երեքշաբթի, յունվարի 1-ին, նոր տարվայ օրը:

Մեզ գրում են ԳԵՂԵՑԻՆԵՑԻՑ հետեւեալը. «Նոյնիքներ ամսի վերջերում հայոց դպրոցի դահլիճում կայացաւ երեցիփոխանի ընտրութիւնը: Ժողովուրդը երեք այսպիսի համերաշխ չէ գործել ընտրողական գործում, որչափ այս անգամ. բոլորն էլ զգում էին որ հարկաւոր է ընտրել մի այնպիսի անձն, որը կարողանար մի գոհացուցիչ ելք տալ եկեղեցական և ուսումնաբանական այժմեան անմիջիպէս դրութեանը: Ընտրողները 43 հոգի էին: Ձայնակի առաւելութեամբ երեցիփոխան ընտրվեց պ. Գեորգ Մէլիք-Շահնազարեանց զէ-Շապուգ, որը ընտրողական ժողովին բացակայ լինելով, ութ հոգուց բաղկացած պատգամաւորութիւն ուղարկվեց նրա մօտ, որպէս զի ինչդրեւ նրան ընդունել պաշտօնը: Պ. Շահնազարեան, թէ և մի անգամ արդէն ընտրված լինելով, այն ժամանակ չընդունեց այդ պաշտօնը, այժմ մեծ սիրով ընդունելով պատգամաւորներին, յայտնեց որ այս անգամ ստանձնելու է երեցիփոխի պաշտօնը, որպէս զի կարողանայ արգարկութեամբ ծառայել հասարակութեան և պաշտպանել նրա իրաւունքները:

Մենք ստացանք հետեւեալ նամակը Պարսկաստանի Ռաշտ քաղաքից. «Գուցէ ոչ մի քաղաք, ունենալով այդքան սակաւաթիւ հայոց ազգաբնակչութիւն (ընդամենը 50 տուն հայ ժողովուրդ) այդքան նախանձելի վիճակ չունի, իր ազգային հաստատութիւնների կողմից, որքան Պարսկաստանի Ռաշտ քաղաքը: Մենք ունենք հայակապ ջարաշէն եկեղեցի, ամբապատ պարիսպով և ծաղկալի ընդարձակ, մաքուր բազուկ, երկսեռ միջասեան բարեկարգ ուսումնարան, 30-ի չափ աշակերտներով, գրադարան հազարի չափ հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն և անգլիերէն գրքերով, ընթերցարան արտասահմանեան բոլոր պարբերական հրատարակութիւններով և վերջապէս թատրոնական ակումբ: Իր ընթերցողութեամբ, բեմով և զգեստներով: Բնակիչներս պարտական ենք այդ բարեք գրութեամբ գլխաւորապէս պ. պ. Է. Լիւնսոօօվի, Թումանեանցիների, Փանեանցիների և Գր. Մարգարեանցի նիւթական օժանդակութիւններին:»

«Հիւսիսային հեռագրական գործակալութիւնը» հեռագրում է որ Մոսկվայի գործարանատէրերը

դիտաւորութիւն ունեն առեւտրական սերտ կապեր կապել Ռուսիայի հետ և վաճառահանել տպագրութիւնների յարմար լինելուն նպաստում են ԱՆՏՈՎԻ և Դունայեց գետի վրա երթեկեղ «Черноморско-Дунайское» ընկերութեան շոգենաւերը, որոնք անմիջական կապեր ունեն ուսուցիչ երկաթուղային գծերի հետ:

ԳՈՒՐԱՔԱՂԱՐԻ հայ բնակիչների մի խմբից այս օրերս ստացանք 50 բուլլէի, որ պարունակում ուղարկել են «Մշակի» խմբագրութեանը, կամաւ նախընտրեցին կարողութեան չափ այս եղանակով նպաստել մեր լրագրի նիւթական ապահովութեանը:

ՎԱՐԻՍԵՆԵՑ մեզ գրում են. «Թէև նոյնիքներ կէսից այստեղ մի քանի անգամ ձիւն եկաւ, բայց միայն այս ամսի սկզբից սկսվեց կանոնաւոր ձյունը: Բկացաւ շարունակում է այստեղ իր կատարածը. քիչ չեն այն ընտանիքները, որոնց իւրաքանչիւրը 3—5 երեխայ է հողին յանձնել: Մի նոր հիւանդութիւն էլ երեւաց հասարակութիւն մէջ. հիւանդի երեսը ուռչում է և հիւանդի տաքութիւն է տալիս: Թէև այդ հիւանդութիւնը մահադէմը չեն եղել մեղանում, բայց հիւանդների թիւը շատ է:»

ՎԱՐԻՍԵՆԵՑ մեզ գրում են. «Գեղեցիկների 11-ին և 12-ին զգալի եղան մեղանում երկրաշարժ չորս հարկաններ: Զօրեղ էր, մանաւանդ, առաջին դարեղ, թէև ոչինչ մնաց չը տուեց շինութիւններին:»

Մեզ ուղարկված է հետեւեալ նամակը Մարտի քաղաքից: «Օր չէ անցնում, որ շոգենաւերը չը բերին այստեղ հայ երկրասարգներ խորհրդից: Իրաբերելից և փոքր-Ասիայի ուրիշ տեղերից: Այդ բոլոր պանդուխտները գնում են Ամերիկա, չը նայելով, որ Միացեալ-Նահանգների կառավարութիւնը նորերում խնդրել է ֆրանսիական կառավարութիւնից չը թողնել ոչ զբնիկ զաղթիկ Ամերիկա, եթէ զաղթողը առնուազն 500 ֆրանկ ապահովութիւն չունենայ: Լսում ենք, որ Ամերիկա նոր զաղթած հայերից շատերը մնացել են այնտեղ անգործ և նիւթապէս անեղանելի, թշուառ վիճակի մէջ:»

Պարսկաստանի Ռաշտ քաղաքից մեզ գրում են հետեւեալը. «Երկու շաբաթ առաջ այստեղ մուտք գործեց Ձուղայի և Հոգնաստանի նոր առաջնորդ Նալի կալիփոսոյը: Տեղիս պատւաւոր անձերից մին, բժշ. Բարսիլեանց, կալիփոսոյին իր մօտ հիւրասրբից: Ամբողջ շաբաթ այստեղ մնալով սրբալանը այցելեց Ռաշտի բոլոր ազգային հաստատութիւնները և մի կանոնադրութիւն ծրագրեց: Որի հիման վրա պէտք է ընտրվեն վեց հոգաբարձուներ, որոնց պաշտօնը պէտք է լինի վերահսկել քաղաքային բոլոր ազգային հաստատութիւնները:

մասնակցեցան ոչ միայն աշխարհիս զանազան կողմերի հայերը, այլ և ուսուցիչ ուսումնական և արտասահմանի օտար հաստատութիւնները:

Իր լաւագոյն օրերը նուիրելով Լազարեան ճեմարանի ծառայութեան, Մկրտիչ Էմին նախ և առաջ հոգաց մայրենի լեզուի ուսումնասիրութիւնը հաստատ հիմքի վրա դնել. այս նպատակով նա յորինեց աշակերտների համար «Քերականութիւն հայկական լեզուի» 1846 թուականին, «Ընտիր հաստուածք» քաղաքը ի գործ նախնի և արդի մատենագրաց հայոց հանդիճ բառագրովք ի հայկական է ի ուսուցիչ բարբառ.—1849 թ.: Ծառայութիւնից ազատ ժամերին նա անձնատուր էր լինում գիտութեան. մեր հին մատենագրութիւնը նրա ուսումնասիրութեան և զբաղմանց զլխաւոր առարկան էր: Յիշեք ժամանակագրական կարգով նրա աշխատութիւններից մի քանիքը:

1850 թ. նա լոյս ընծայեց իր «Վէպը հնոյն Հայաստանի» քննութիւնը, որը առիթ տուեց ֆրանսիացի հայագէտ Դիւլորիէին (Ed. Dulaurier) երկու նոր քննութիւններ գրելու հնոյն նիւթերի մասին. 1) «Etudes sur les chants historiques et les traditions populaires de l'ancienne Arménie, d'après une Dissertation de M. Emin». 2) «Les-chants populaires de l'Arménie».

1853 թ. նա հրատարակեց Մովսէս Խորենացու հայոց պատմութեան առաջին գեղեցիկ թարգմանութիւնը ստուար ծանօթութիւններով, Խորենա-

ցու կենսագրութեամբ. գրքի վերջում կայ նաև մի յաւելում հայոց այդուրեքի մասին, որ 1865 թ. ֆրանսիացի Պրիւզով թարգմանեց ֆրանսերէն այս վերնագրով «De l'Alphabet Arménien.» Paris.

1861 թ. հրատարակեց «Մեծին Վարդանայ Պատմութիւնը» և նրա ուսուցիչ թարգմանութիւնը ծանօթութիւններով, միւս (1862 թ.) տարին Բրոստ քննութիւն գրեց դրա վրա «Analyse critique de la Vseобщая история de Vardan.» և այլն:

1864 թ. Մկրտիչ Էմին լոյս ընծայեց. 1) «Vseобщая история Степаноса Таронского» (Ասողիկ): 2) «Синодальное слово Нерсеса Ламбронского» (Ատենարանութիւն).

3) «Очеркъ религий азычскихъ Армянъ» (Recherches sur le paganisme Arménien թարգ. A. de Stadler. Paris 1864) և քննութիւն V. Langlois-ի «Le Nord» լրագրում 1865 թ. իսկ սրա թարգմանութիւնը ուսուցիչ լեզուով տես Աксаков-ի «Денъ» շաբաթաթերթում:

4) «Очеркъ истории Армянской Восточной церкви».

1879 թ. լոյս տեսաւ Շարականի ամբողջ թարգմանութիւնը, «Шараканъ, Богослужбные каноны и пѣсни армянской церкви».

1867 թ. Էմին թարգմանեց ֆրանսերէն լեզուով փաստոս Բիւզանդի պատմութիւնը «Faustus de Byzance, — Bibliothèque historique en quatre

livres» և այլն.—հրատարակվեց Լանդուայի Collection-ում Նուբար փաշայի ծախսով:

Մկրտիչ Էմինի հայերէն հրատարակութիւնները սրանք են. 1) Յովհաննու կաթ. Դրասիւ, պատմութիւն հայոց 1853 թ. 2) Ազգաբայ փարպեցեայ թուղթ առ Վահան Տէր-Մամիկոնէից 1853.

3) Մովսէսի Կաղանի. Պատմ. Աղուանից աշխարհի 1860, 4) Մկրտիչայ Այրիվանեցեաց Պատմ. հայոց 1860.

5) Ատենիանոսի Մեծեաց կալի. Պատմ. տանն Միսական 1861. Այս հայերէն հրատարակութիւնները, որպէս և Վարդանայ տիեզերական պատմութիւնը վաճառվում են Լազարեան ճեմարանում:

Չը յիշելով հանդուցեալի միւս մասը գրում ենք, որոնք հրատարակվեցան այլ և այլ ժամանակ և որոնց թիւը հասնում է մէջ բերածներին հետ միասին մինչև 34-ը, կաւեացեալ, որ Մկրտիչ Էմին մինչև իր կեսերի վերջին օրերը չէր դադարում պարապելուց, միշտ կարդում էր:

Վերջին երեք տարին նա շատ թոյլ էր, ամբողջ մարմինը դողում էր և նա հարկադրված էր լինում գիրքը ընել սեղանի վրա և այնպէս կարդալ:

Հասակով նա փոքր էր, բայց թիկնաւէտ և ունէր շատ ամուր կաղնութիւն. հաստատամտութիւնը և երկաթէ կաղնը նրա բնաւորութեան յատկանշանքն էին: Ազատ համոզմունքի ու զաղափարի տէր լինելով, նա գիտէր գիտակցաբար

պաշտպանելու մի անգամ յայտնած միտքը և կը պաշտպանէր յամառութեամբ առանց մի քանի տահանջներ: Նրա հրացայտ աչքերը ակնոր ներքի տակից, կոբովի խօսքը հնգունով հանդերձ անդիմադրելի էին: Բայց որչափ կրկնապարզական աշխոյժ և ոգևորութիւն էր նշմարում այս կարգապահ խիստ ծեցունաւ աչքերում երբ նա դասախօսութիւնները միջոցին հայ ուսանողներին առաջ Լազարեան ճեմարանի մասնադիտական դասարաններում, թարգմանում էր Ներսիսի «Յնք աղանդոց հեթանոսացն» կամ Ներսիսի Լամբրոնացու թուղթը առ Լան թագաւոր Վիլիկիւն և կամ աւանում էր մեզ հայ դպրութեան պատմութիւնը:

Բայց բաւական է այսքանը նրա մասին այժմ:

Շաբաթ օր, գեղեցիկների 15-ին, որ թաղման օրն էր, պոլսեանիական թանգարանի դահլիճում բնագիտական ընկերութեան մարդաբանական թանգարանի հետ նախագահութեամբ պրոֆ. Միլլէրի, որ նոյն նիստում մի երկար ճառ նշմարեց հանգ. Էմինի իշխատակից: Վերակից ընկերներին, կոմսուհի Ուվարովա Մոսկվայի կայսերական Հնագիտական ընկերութեան նիստում, իբրև նախագահ նոյն ընկերութեան յայտնեց իւր ամենքին, Մկրտիչ Էմինի մահվան մասին: Ներկայ անդամները և բոլոր միւս այցելուները ուրիշ եղան, յարգելով հանդուցեալի յիշատակը:

Խ. Յովհաննիսեան

հերին: Նոյն կանոնադրութեան դրու թեանք ըստ-
րողական ձայն կունենան միայն այն անձինք,
որոնք կը հատուցանեն ուսումնարանի օգտին տա-
րեկան մի թ ու մ ան փող:

ԲՈՍՏՈՆ (Ղոնի վրա) քաղաքի մի քանի հայեր
ուղարկեցին մի 10 րոպէի, որպէս զի իրանց
անուանի ուղարկենք «Մշակ» տարեկան մի օրի-
նակ Նոր-Նախիջևանի Հոփիսիմեան օրիորդաց
դպրոցի անունով:

ԿՍՍԻՅ մեզ գրում են, որ այդտեղի հայ թատ-
րոնականները մտադիր են լինելու տոներին
մի ներկայացում տալ հայոց ուսումնարանների
օգտին: Կը խաղան «Օրիորդ Քերոյեան» և «Երե-
ւանայի թիւից հիւանդ» պիեսները:

ՕՐԻՈՐԴԱՅ մեզ գրում են. «Մեծաքանակ
գործարարներ տէր պ. Կարապետ Բաբայանց քանի
տարի է արդէն բերել է տալիս խաղական տե-
սակի բոժոժի սերմը և ծախում Օրիորդայի և
չորակայ դիւղերի բնակիչներին: Այժմ պարտը,
առաջիկայ տարւոյ համար բերել է տուել մեծ
բնակութեամբ սերմ և ծախում է մոտաւ 50
կոպէկով, այն ինչ առաջ ուրիշները նոյն սերմը
ծախում էին 1 րոպէով, կամ նոյն իսկ 1 ր. 20
կոպէկով: Յայտնի է որ այստեղ չեղածապահու-
թիւնը ժողովրդի գլխաւոր պարագմունքն է և
տարեկան մինչև 30 կամ 40 հազար րոպէու սերմ
է ծախում գաւառում: Ուրեմն պ. Բաբայանց,
անկասկած, մեծ օգուտ կը տայ ժողովրդին,
իր բերած սերմը կէս գնով ծախելով գիւղացի
չեղածապահներին:

Մի քանի պարսկահայտակներով ստացանք
մի նկատողութիւն, որով նրանք յայտնում են
յնորհակալութիւն թիֆլիսի Պարսից հիւպա-
տոս գեներալ-ադիւտանտ Միրզա-Միշա խա-
նին, այն պատճառով որ հիւպատոսը բաւա-
կան սիրայի է վարում իրան գիւղի պարսկա-
տանցիներին հետ, աղքատներին օգնում է փողով
և ձրի պատգորտ տալով: Հարկաւոր ենք համա-
րում աւելացնել, որ Միրզա-Միշա խանը բաւա-
կան ինտելիգենտ մարդ է, նա հրատարակել է
մի գիրք «Խալիլ Բուշալի» անունով, որով նա
առաջարկում է, եւրոպական տառերը ընդու-
նել պարսկական գրականութեան մէջ: Այդ գիրքը
իր ժամանակ բաւական աղմուկ հանեց:

Դայիւն է նոր տարի, Քրիստոսի ծննդեան տո-
նը, և ոչ ոք չէ մտածում գէթ այդ մեծ տօնին,
կը մարդկանց մեծ մասը վայելում է ամեն տե-
սակ ուրախութիւն, մի փոքր օգնութիւն հասցնել
այն աղքատներին, որոնք ոչ ուսումնա հաց ու-
նեն և ոչ իրանց գլուխը դնելու մի անկիւն: Ու-
րիշ շատ քաղաքներում այդ օրերին քաղաքը, գա-
նաղան ընկերութիւններ և հազարաւոր մասնա-
ւոր անձինք անգին գումարներ են տալիս աղ-
քատներին բաժանելու համար,— և մեր թիֆլիս
է միայն, որ ինչպէս ամեն դէպքում, այնպէս և
այդ դէպքում, քնած է խոր քնով:

Պ. Կարա-Մուրզա, իր մեծ ժողովրդականու-
թիւն գտած խմբով, Բաքուից եկել է թիֆլիս, և
մի քանի կոնցերտներ պիտի տա: Առաջին կոնցեր-
տը, ինչպէս մեզ հաղորդում են, լինելու է թիֆլի-
սի ժողովարանում, ամսիս 30-ին: Հշմարիտ որ
մեծ դուարձութիւն է թիֆլիսի հասարակութեան
համար, որ առիթ պիտի ունենայ այդ տօներին
լսելու չորհալի խմբի կոնցերտը: Եւ անկա-
կած, ամեն դէ կաշխատի այդ մեծ դուարձութիւ-
նը դադար չտալով ներկայ լինել այդ կոնցերտ-
ներին:

Ներքին գործերի մինիստրութիւնը հաստատեց
այն ընկերութեան կանոնադրութիւնը, որի նպա-
տակն է դարգացնել կանանց արհեստագիտական
ուսումը: Այդ ընկերութիւնը, ի միջի այլոց,
պիտի է հիմնել յատուկ կ ու ռ ս ե ռ, արհեստներ
վարձակներ պատրաստելու համար:

Հարկաւոր ենք համարում յայտնել ի գիտու-
թիւն բարեգործների, որ դժբաղդ Փափաղեան
քաղաքին օգնել ցանկացողները փողը կարող են
ուղարկել և «Тифлисский Листок» լրագրի խմ-
բագրատունը, որը այդ նպատակով հանգանակու-
թիւն է բացել: Յիշեալ խմբագրութիւնը սիրայի
կերպով յանձն է առել հանգանակած գումարը
անվիշապէս կարօտ քաղաքին հասցնել:

«Օտեկ» օպերայի ներկայացումը, ղեկավարելի
26-ին, շատ էլ մեծ բազմութիւն չէր գրաւել
թատրոնը, թէև Եագօի դերը կատարում էր Բու-
րիւրաոս, որը այդ դերը սկզբից մինչև վերջը
հրաշալի կերպով կատարեց: Գեղեցիկ մանկ
կատարեց Երկին Զարուհիայա: Օտեկի դերը
կատարող պ. Կոչից, որը, եթէ չհնչէ սխալում,
առաջին թէ երկրորդ անգամն է կատարում այդ
դերը, բաւական փայլունք իր խաղը. պ. Կոչից
լաւ ձայն ունի, բայց վերին աստիճանի ոգևորու-
թիւնից, ցանկանալով իրեն թէ տպաւորութիւն
թողնել, ամենագեղեցիկ տեղերում ոչ թէ երգում,
այլ գոռում էր: Այդ գ ո ո ո ց ն ե ռ ը միանգամայն
փայլունք նրա խաղի տպաւորութիւնը:

Պ. Կրապիշնիցով մ ա լ ո օ ր ս ի ա կ ա ն խումբը,
որ մի քանի ժամանակ թիֆլիսում էր, իսկ յե-
տոյ գնաց Բաթում և Բաքու ներկայացումներ
տալու, այժմ կրկին թիֆլիս է եկել և սկսել է
բանկի թատրոնում ներկայացումներ տալ: Խում-
բը այստեղ երկար չէ մնալու: Զէ կարելի չը
նկատել, որ պ. Կրապիշնիցին, իբրև մալորոսիա-
կան թատրոնի հիմնադիրներից մինը, շատ գեղե-
ցիկ կերպով է տանում իր գործը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴՈՅՏՈՐ ՀԵՅՏՐԻՍ ՇԼԻՄԱՆ

Նորերս ստացվեց եւրոպական դիտանկանս-
րից մէկը՝ Հէյնրիխ Շլիմանի մահուան լուրը: Հան-
գուցեալը դեռ ութսունական թվականների սկզբ-
երն մեծ հռչակ ստացաւ հին Տրոյադայի իր փո-
րոճաքներով և հետադարձութիւններով: Նա բա-
ցեց Միկէլէի թագաւորներին հին դարաբանները,
և լուսաւորեց աշխարհի առջև վերականգնեցը
Հոմերոսի երգած դարձիւրջանի պատկերը այն
ժամանակ, երբ դիտանկանները իւրուր ջնջել էին
թափում վճռել այդ դժուար խնդրը: Դեռ վաղ
պատանկական ժամանակից նա մի առանձին
հակումն էր ցոյց տալիս դէպի հնութիւնների ու-
սումնասիրութիւնը: Նա կաշխատեց պատա-
րի որդ է և ծնվել է 1822 թվին Մէկլենբուր-
գում, Անիէրսթադէն գիւղում: Մանկութիւնից
շատ տպաւորվող երեխայ լինելով, նա սկսեց
չափ վաղ սովորել և տառնաւորա կը ըստ ժամա-
նակ լատիներէն լեզուով գրեց Տրոյադայի պա-
տերազմի գլխաւոր էպիգրաֆները և Ալեքսէմոնի
ու Ուրիսեսի արկածները: Ծնողները սարսափելի
աղքատութիւնը առժամանակ կանգնեցրեց պա-
տանու ցնորքը՝ բազմակողմանի կերպով ուսում-
նասիրել Հոմերոսի ստեղծագործութիւնները: Տա-
ւըն և չորս տարեկան հասակում նա ստիպված
էր մի մանրավաճառի աշակերտ դառնալ և առա-
ւօտան 5 ժամից մինչև 11 ժամը աշխատել այն-
տեղ: Երկուայն այնտեղ էլ նա չը յառաջադիւն
և սկսեց յետադէն լեզուն սովորել նախկին մի ու-
սանողից, որին հաղորդ արքեպիսկոպոսն պատճա-
ռով յանձնել էր խանութպանին: Երբ աստիք
Շլիման հիւանդացաւ այդտեղ և այդ պատճառով
խանութիւն թողնելով, Համբուրգ ուղևորվեց, նըս-
տեց մի նաւ, որ վէնցուէյա էր գնում, նաւը
խորտակվեց, և ամեն տեսակ չարաբաղդ դէպքե-
րից և ճանապարհին ողորմութիւն խնդրելուց յե-
տոյ, Ամստերդամ հասաւ, պառկեց հիւանդանո-
ցում, և առողջանալուց յետոյ պաշտօն գտաւ
կլիէնի գրասենեակում: Այդտեղ ուսումնասի-
րեց ֆրանսիական, հոլանդական, անգլիական,
սպանիական, իտալական և պորտուգալական լե-
զուները, և վերջապէս ռուսաց լեզուն, և հասա-
րակ նամակատարից առետրական գործակա-
ղարձաւ 1,200 ֆրանկ ուճով: Որպէս առետրա-
կան գործակատար, նա 1846 թվին Պետերբուրգ
ուղարկվեց և գործերն այնպիսի աշխուրդեամբ
առաջ տարաւ, որ հետեւեալ տարին այստեղ հիւ-
նեց իր սեփական «Հէյնրիխ Շլիման» առետրա-
կան տունը: Տաւր տարվա ընթացքում ինդիգօի
առետրող անելով, աշխատեց մօտ 500,000 մարկ
և այն ժամանակ սկսեց մտածել կրկին իր պա-
տանկական երազի մասին— Տրոյադայի փո-
րոճաքներն անել և նորից սկսեց ուսումնասիրել
հին և նոր յունարէն լեզու: Երբ հարստացաւ,
նա առետուրը թողեց և 1866 թվին բնակութիւն
հաստատելով Պարիզում, սկսեց հնագիտութեամբ
պարագել: 1868—69 թվերին նա ճանապարհոր-
դեց Խաղաղագիտական և դնաց հին Տրոյադայի տեղը:
Դրանից էլ դեռ վաղ, 1858 թվին նա այցելեց
Շլիցիա, Դանիա, Գերմանիա, Իտալիա և Նիդը-
րաւ և ապա ուսումնասիրելով արաբական լե-

զուն, անցաւ Երուսաղէմ և Սիրիա և 1859 թվին
գնաց Աթէնք: 1864 թվին Շլիման առաջին էր,
որ ուղևորվեց իթաքէ և Տրոյադա: Շլիմանի 1868—
1869 թվի ճանապարհորդութեան հետեւեալ էր
նրա Պարիզում հրատարակած մեծ գիրքը «Itaque,
le Peloponnèse, Troye—Recherches archéologiques»
վերնագրով գիրքը, որը վերջիշեալ տեղերի ու-
սումնասիրութեան իրան նուիրող իւրաքանչիւրի
համար սեղանի գիրք է համարում: 1869 թվին
նա Աթէնքում պատկից մի յոյն աղկիւյ հետ,
որը մասնակից էր նրա աշխատութիւններին:
1871 թվից մինչև 1873 թվին նա աշխատում էր
Հիւսարկիի փորոճաքների վրա, դուրս փորեց
Պրիամի հռչակաւոր դանձերը և մօտ 900 ձուլա-
ծոյ առարկաներ ոսկուց: Հետեւեալ տարին նա
կրկին բազմաթիւ գիւտեր արաւ: Նա յանկար-
ծակի վարձանակեց Նէսպօլում գիւտները 14-ին:
Շլիման գիտութեան ճշմարիտ նահապետ էր:

ԴԻՊԼՈՄԱՏԻԱԿԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս օրերս տեղի ունեցաւ մի հետաքրքրական
դէպք.—Մարաբուրգից ներկայացաւ իշխան Բիս-
մարկին մի պատգամաւորութիւն:
Մարաբուրգից, Էլզաս-Լօթարինգիայի ծոցից
մի պատգամաւորութիւն ներկայանալը իշխան
Բիսմարկին,—ինքն ըստ ինքեան զարմանալի է,
բայց այդ պատգամաւորութեան գալը մի այնպի-
սի ժամանակ, երբ Բիսմարկ հեռու է կառավա-
րութեան ղեկից,—աւելի զարմանալի է դար-
ձնում այդ դէպքը:

Նախկին կանցլէրը, ինչ կասեմ, մեծ ուրա-
խութեամբ ընդունեց այն շողաբորժութիւնները,
որ թափվեցան պատգամաւորների բերանից, և
անկասկած դեռ մասնաւոր մասուն էլ շտապեց
յայտարարել, «տեսնում եմ, Էլզաս-Լօթարինգիան
այնքան սերտ կերպով կապվել է Գերմանիայի
հետ, որ պատգամաւորութիւններ է ուղարկում
այդ միութեան հերոսներից մէկի» Բիսմարկ
մօտ: Ինքն իշխան Բիսմարկ օգուտ քաղեց առի-
թից, մի քանի բացատրութիւններ տալու այդ
հարցի առիթով, որը բնականաբար յարուցվում է
ամեն անգամ, երբ ինդիգօ վերաբերում է Էլ-
զաս-Լօթարինգիային: Այդ բացատրութիւնները
հաւանքեց պարզում են դերմանական դիպլո-
մատիական շրջաններին հայեացքները, և լոկ Բիս-
մարկի անձնական հայեացքները չեն խօսելով
նոր երկրները տիրապետելու մասին, նախկին
կանցլէրն ասեց. «Գերմանիան կը միացնի իր
հետ այնպիսի երկրներ, որոնք կամ անպայման
հարկաւոր են իրան իր սահմանները պաշտպանե-
լու համար, կամ որոնք այնքան դերմանական հո-
գի ունեն, որ եթէ այնտեղից հեռացվի դերմա-
նական վերջին դիւրոյն անգամ, նրանք էլ իրեն-
նական ուղով ինքնուրուպ կը մնան»: 1866 թվից
մինչև 1870 թվին յաճախ ակնարկութիւններ են
եղել, թէ պէտք է Գերմանիայի հետ միացնել
Հոլանդիան, բայց ինքն, Բիսմարկ, միշտ դէմ է
եղել այդ միացման, և ասել է, որ եթէ նոյն իսկ
5 միլիոն նիդերլանդցիներ ծնկաջոք աղաչեն
միացնելու մասին, Պրուսիան, այնուամենայնիւ,
չի համաձայնվի:

Իշխան Բիսմարկի այդ խօսքերն ինչ ասել
կուզէ, ղեկեցիկ են միայն արտաբերուած: Միեւ
անպատճառ պէտք է տիրապետեմք այն երկրներ-
ը, որոնք անհրաժեշտ են մեր սահմանները
պաշտպանելու համար,—ասում է Բիսմարկ:
Բայց ինչպէս պէտք է հասկանալ այդ խօսքերը:
Իշխան Բիսմարկի նման դիպլոմատները շատ ա-
զա հ են լինում և նրանց երևակայած «հայրենի-
քի սահմանները» չափազանց լայն են, իսկ այդ
«սահմանների պաշտպանութեան» հարկնասիրա-
կան զգացմունքն էլ վերին աստիճանի առաճա-
կան: Այնպէս որ ղեկավարվելով բիսմարկեան
թէօրիայով, Գերմանիան պէտք է իր սահմանները
գոցէ Էլզաս-Լօթարինգիայից էլ շատ հեռու տա-
նի, որտեղ այդ նոյն Բիսմարկ տեսնում է միան-
գամայն «գերմանական ոգի»:

Այդ տեսակ հայեցակէտի վրա հիմնած հայրե-
նիքը անսահման է:

ՆԱՄՍԱՊ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻՑ

Սալմաստ, ղեկեմբերի 20-ին

Հանդուցեալ Մուշեղ կաթողիկոս Գրիգորեանց,
Թաւրիզի առաջնորդը, 1882 թվականին սալ-
մաստցիներին քարոզելով համոզեց ղեկեմբերում
զպրոցներ բանալ:

Այդ խեղացի անձնաւորութիւնը զպրոցների
նիւթական դրութիւնն ապահովեցնելու համար
այն աստիճան ոգևորում է ղեկեմբերներին, որ
վերջիններս սկսում են նուիրաւորութիւններ ա-
նել. այդ կամաւոր նուէրները մի պատկառելի
գումար են կազմում: Ուսումնարանների դրու-
թիւնը դեռ բոլորովին չը կանոնաւորած, այդ ան-
խոնջ մշակը, ժողովրդի ցան ու դարձը իմացո-
ղը, Մուշեղ կաթողիկոսը վախճանելով է: Սալ-
մաստում ժողովրդականութիւն ստացած առաջ-
նորդի յաջորդը շատ թոյլ լինելով, Սալմաստի
տարրական դպրոցներն ընկնում են: Կարճ ժամա-
նակից յետոյ Թաւրիզում նշանակվում է յաջորդի
պաշտօնով Միսիթաբեան կաթողիկոսը. սրա օրով
զպրոցներն սկսում են կամաց-կամաց լաւանալ:
Այժմ զպրոցների թիւը հասնում է մօտ 11-ի, 8-ը
տղաների, 3-ը օրիորդաց:

Զուտ հայ գիւղեր 5 հատ են, որոնք թէ տղա-
յոց և թէ օրիորդաց զպրոցներ ունեն. դարձեալ
15 թըքախառն գիւղեր կան, որոնց մէջ հայերը
5—10—20, երբեմն էլ յիսուն անով են: Սալմաս-
տը իր զպրոցների քանակութեան կողմից բարձր
է Կովկասի գիւղերից, իսկ տեսակի կողմից
ոչ, թէև մի քանիսը կարող են մրցել: Գպրոցների
չնչերը, որոնց մի մասն երկարակյան է, աւելի
քան կանոնաւոր, առողջապահական ձևով են շին-
ված. խոշոր լուսամուտներով, ընդարձակ և բարձր
սենյակներով:

Ուսուցիչները մեծ մասն իրանց կոչման յարմար
չեն: Ոմանք մաքուր խօսել, կարգաւ ու գրել չը
գիտեն: Թէև Տեւ Թօթիկեան շրջանից յետոյ այս
զպրոցներն իրանց զարգացման երկրորդ ֆազի-
ստան են գտնվում, միջադրանքից ու խալիֆանս-
րից աղաղակ են, նոյնպէս և ժամադրեց ու
սաղմուց, սակայն ցանկալի է, որ սալմաստցի-
ներն աւելի պատրաստված, կրթված ուսուցիչներ
պահեն:

Աշակերտները կարգում են երեւոյ (պարսկա-
կան աղղեցութիւն), քիթ մէջ և գոտալով Գի-
տակցական, դարգադրական ընթերցանութիւն
չը կա: Կարգապահութիւնը թոյլ է, դասի ժամա-
նակ ընդհանուր շփոթ է տրուում դասարաննե-
րում, մէկին բան հարցնելիս տասնեակ մանուկներ
գոռալով մէջ են խառնվում, պատասխանում,
պարագմունքի ժամանակ ամեն մի աշակերտ ա-
զատ կերպով դուրս ու ներս է անում ինքնա-
կամ, ի հարկէ, խանդարելով դասը. երկնային
բացակայութիւնը ի նկատի չէ աւանդում Մի դա-
սարանում երեք-չորս կարգի աշակերտներ են զե-
տեղված և այս բոլորը ուսուցչի համար բոլորու-
վին սովորական բաներ են: Սրան տակեցրեք և
այն 3, 4, 5 տարեկան ազատ ունիւղիւնները, ո-
րոնք շարունակ ներս ու դուրս են անում և ա-
մեն բան կը լրանայ: Գպրոցների դասընթացը
անորոշ է, 5—8 տարի սովորող դարձեալ շա-
րունակում է ուսանել, նոյնը կրկին: Սովորեցնում
են հայոց լեզու, թուրքաւորութիւն, տեղ-տեղ ուս-
անել կամ պարսկերէն, կարծեմ մի տեղ էլ օրի-
որդներին փոքր ի շատէ կանոնաւոր ձեռագործ,
հայոց պատմութիւն, աշխարհագրութիւն և ընդ-
հանուր աշխարհագրութիւն: Առարկաներն ամեն
տեղ էլ չեն անցնում: Կարծում են, որ մեծ դը-
ժուարութիւն չի լինի կանոնաւոր ծրագրի կադ-
միս, օգտուելով Կովկասի տարրական դպրոցների
ծրագրից, վերջինիս մի քանի պակասութիւններից
խոյս տալով:

Անկարելի է մոռանալ Մահաբի օրիորդաց
դպրոցը, որը դեռ նահապետական դրութեան մէջ
է: Երբ տղերքն գրողը մտաւ ներս, 10-ի չափ
օրիորդներ մինդարների ու մաշված հասիւնների
վրա նստած, իսկոյն բոլորն էլ ոտի կանգնեցին,
սաստիկ ամաչելով և երեսները կիտով չափ թեքե-
ցին դէպի պարտ: Սենյակի մի կողմում ամթից
կուշ եկած, կանգնել էր մի ջահիլ հարս, քօղն ե-
րեսին քաշած, դա վարժուհին էր: Երկու փեղերի
ձեռքին այրեմարան էր, միւսները կարգում էին
սաղմոս ու կտակարան: Հաղիւհաղ կարողացանք
երկու առաջերտուհու կարգաւ տալ: Խոճալի բան
էր տեսնել, երբ երեսնանք քաղաքի խոս-
քերն արտասանում էր, ոչինչ չը հասկանալով
իսկ այդ ժամանակ վարժուհին քօղը մի քիչ յետ
քաշելով ցածր ձայնով, մեղանից դադարի սխալ-
ներն ուղղում էր...

Այսպիսի դպրոցները կանոնաւորելու և կրթի-
ված գիւղական ուսուցիչներ պատրաստելու հա-
մար, Սալմաստում կարեւոր է մի կեանքական գոնէ
երեք կամ չորս-հասարակական դպրոց բանալ:
Նոր հիմնված Սալմաստի Բաբեգործական ընկե-
րութիւնը և ինքն ժողովուրդը կարող է նպաստել

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорист-Меликовск. ул. д. 138.